«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԻՄՈՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԵՐԿԱԿԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Նարեկ Ղազարյան
ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրոս
kazaroffn@yahoo.com
Գիտ. ղեկ.՝ պ.գ.թ., դոց. Գ.Բալասանյան

Արևելյան Թիմոր: Արևելյան թիմորի անկախացման գործընթացը որոշ առումներով նմանություններ ունի Արցախի անկախության գործընթացի հետ: Որպեսզի հասկանանք այս երկու պետությունների անկախացման գործընթացների նմանությունները պետք է խորամուխ լինենք դրանց պատմության մեջ:

Արևելյան Թիմորի պատմությունը նմանություններ ունի հայոց պատմության հետ: Արևելյան Թիրմորը պատմության ընթացքում գտնվել է Պորտուգալիայի, ապա Ինդոնեզիայի կազմում: Պորտուգալական տիրապետության տարիներին Թիմորը ունեցել է գաղութային կարգավիճակ և առանձնապես զարգացած չի եղել:[1] Երկրորդ աշխարհամարտի տարիներին Դաշնակից պետությունները, ափ իջան այնտեղ հակառակ պորտուգալական իշխանությունների, դրան հետևեց ճապոնական բանակի ներխուժումը, որը կարողացավ դուրս շպրտել Դաշնակիցներին և այնտեղ մնալ 1942-45 թթ. ընթացքում:[2] Երկրորդ աշխարհամարտիավարտից հետո Պորտուգալիան վերականգնեց իշխանությունը Թիմորի տարածքում և մինչև 1970-ական թվականների կեսերը կարողանում էր Արևելյան Թիմորում ապահովել տարեկան մինչև 6% տնտեսական աճ, որն էականորեն զարգացրեց Արևելյան Թիմորի կենսամակարդակը: Այդ ընթացքում ՄԱԿ-ը Արևելյան Թիմորը համարում էր ոչ ինքնիշխան տարածք Պորտուգալիայի կազմում, դրանով իսկ ամրագրելով Արևելյան Թիմորի իրավական կարգավիճակը:[3] Պորտուգահայում տեղի ունեցած հեղափոխությունից հետո 1974 թվականից սկսած պորտուգալական նոր իշխանությունները սկսեցին ավելի հանդուրժող քաղաքականություն վարել իրենց գաղութների նկատմամբ և որոշակի ազատություն տվեցին դրանց: Այս քաղաքականության արդյունքում Թիմորում ձևավորվեցին երկու հակամարտող կողմեր. մի կողմից Թիմոր-Լեստեի ազատագրության հեղափոխական ճակատը (ԹԼԱՀՃ) և պորտուգալական կողմնորոշում ունեցող իշխանամետ ուժերը: ԹԼԱՀՃ-ն սկսեց պարտիզանական պայքար ինդոնեզական իշխանութ-յունների դեմ, որը տևեց 1975-1999 թթ.: Ինդոնեզիան Արևելյան Թիմորը հայտարարեց իր 27-րդ նահանգը և վերջինիս զրկեց ինքնավարությունից՝ դարձնելով սովորական մարզ: ԹԼԱՀՃ-ն այս տարիների ընթացքում պարբերաբար թեժացնելով պայքարը կարողացավ հասնել նրան, որ միջազգային հանրությունը սկսեց Թիմոր-Լեստեի անկախության ճանաչման գործընթացը: Իրադարձությունները կտրուկ շրջադարձ արձանագրեցին 1991 թվականին, երբ Թիմորի մայրաքաղաք Դիլիի բնակիչները խաղաղ ցույց էին իրականացնում դեպի Սանտա Կրուզ գերեզմանոց, որի մոտակայքում ինդոնեզական ոստիկանական զորքերը կրակ բացեցին ցուցարարների վրա և սպանեցին ավելի քան 200 անմեղ ցուցարարի: Դրանից հետո ջարդերը շարունակվեցին, որոնք շարունակվեցին մինչև 1996 թվականը:

[1] https://history.state.gov/countries/timor-leste
[2] http://www.timor-leste.gov.tl/AboutTimorleste/history.htm
[3] Տես նույն տեղում

Դրանց արդյունքում զոհվեցին ավելի քան 200 հազար խաղաղ բնակիչներ: Ոմանք էլ ստիպված եղան փախստական դառնալ: Ինչպես արդեն նշվեց այս իրադարձություն-ները ստիպեցին միջազգային հանրությանը փոխել վերաբերմունքը Թիմորի հարցի նկատմամբ և ձեռամուխ լինել վերջինիս անկախության գործընթացին:

ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը 1999 թ. ձևավորեց ՄԱԿ-ի կազմում Թիմոր-Լեստեի օժանդակության առաքելությունը, որը պետք է զբաղվերերկրի տարածքում ռեֆերեդումի նախապատրաստման աշխատանքներով:[1] Հանրաքվեի արդյունքում 2001 թվականին ընտրվեց սահմանադրական խորհուրդը, որը պետք է նախապատրաստեր երկրի սահմանադրությունը: 2002 թվականին Արևելյան Թիմորը կամ Թիմոր-Լեստեն պաշտոնապես անկախ ճանաչվեց: Թիմոր-Լեստեն նոր հազարամյակի առաջին անկախացած պետությունն է համարվում: Այն ՄԱԿ-ի լիակատար անդամ է և նույնիսկ հայտ է ներկայացրել մտնելու ԱՍԵԱՆ-ի կազմի մեջ, որին կողմ է Ինդոնեզիան, որքան էլ որ զարմանալի է:

Այսպիսով Արևելյան Թիմորի ժողովուրդը պայքարելով սեփական անկախության համար կարողացավ հասնել նրան, որ միջազգային հանրությունը ճաչաչեց և ընդունեց վերջինիս՝ տեղ տալով նրան ՄԱԿ-ում և մյուս միջազգային կառույցներում:

<u>ԱՐՑԱԽ:</u> Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ունի բավական խորը արմատներ: Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) հիմահախնդրը ծագում է դեռևս 20-րդ դարի 20-ական թվականներից, երբ Ռ(կ)ԲԿ Կովկասյան բյուրոն որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղը միացնել Ադրբեջանական ԽՍՀ-ին հիմք ընդունելով տնտեսական կապվածությունը Լեռնային և Դաշտային Ղարաբաղների միջև: Խորհրդային շրջանում ադրբեջամական իշխանությունները ԼՂ տարածքում վարել են էթնիկ զտումների քաղաքականություն, որի հետևանքով 1989 թ. դրությամբ ԼՂ-ում բնակվող հայերի թիվը նվազել է՝ հասնելով բնակչության 76,9%-ի:[2]

«Վերակառուցման» քաղաքականության մեկնարկը հիմք հանդիսացավ ԽՍՀՄ կազմում եղած բազմաթիվ լատենտ կոնֆլիկտների բռնկման համար: ԼՂԻՄ-ի հայ բնակչությունը գլուխ բարձրացրեց և պահանջեց մարզի՝ Հայկական ԽՍՀ-ին միանալը: Սկսվեց Ղարաբաղյան շաժումը, որի ղեկավարումը իրենց վրա վերցրեցին «Ղարաբաղ» և «Կռունկ» կոմիտեները: Ի պատասխան արցախա-հայության իրավական պահանջի ադրբեջանական ղեկավարությունը ձեռնամուխ եղավ ահաբեկման քաղաքականությանը: Դրա առհավատչյան են Բաքվի և Սումգայիթի ջարդերը, որոնց զոհ գնացին հարյուրավոր հայեր, իսկ մոտ 400.000-ը դարձան փախստականներ: Սա վերջնականապես ապացուցեց, որ Ադրբեջանի կազմում Արցախը ապագա չունի: Սկսվեց մի գործընթաց, որը հետագայում հանդիսացավ հետխորհրդային տարածաշջանում ազգերի ինքնորոշման նախադեպը: Արցախի ինքնորոշումից հետո Ադրբեջանը սկսեց լայնամասշտաբ ռազմական գործողություններ Արցախի նկատմամբ, որն ավարտվեց 1994/95թթ. կնքված եռակողմ (Հայաստան, Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ) զինադադարի համաձայնագրով, որը մինչ օրս գործում է, սակայն պարբերաբար խախտվում է ադրբեջանական կողմից: Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտությունը սառեցվեց և ներկայում ընթանում է բանակցային գործընթաց ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆորմատում:

---

[1] http://www.un.org/en/sc/repertoire/Chapter%208/Asia/04-07_8_Timor-Leste.pdf:

[2] “ Nagorno Karabakh Is Solution Visible?”, Edward Nalbandyan, page 2, Yerevan 2015

Հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցությունների հիմքում ընկած են միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից երեքը՝ ուժի և ուժի սպառնալիքի կիրառման արգելքի սկզբունքը, պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը և ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը: Այս սկզբունքները և հակամարտության կարգավորման հիմնական քայլերը հրապարակվեցին 2009թ. Իտալիայի Լա-Քվիլլա քաղաքում տեղի ունեցած «Մեծ ութնյակի» գագաթաժողովից հետո, որոնք հանրությանը հայտնի են «Մադրիդյան սկզբունքներ» անունով:
Մադրիդյան սկզբունքների ընդունումից հետո պաշտոնական Երևանը հայտարարեց, որ համաձայն է այդ սկզբունքների հետ, սակայն Բաքուն շարունակում է պնդել, որ չի ընդունում դրանք և չի պատրաստվում որևէ զիջումների գնալ Լեռնային Ղարաբաղի հարցում: Լա-Քվիլլայի գագաթաժողովից հետո 2011 թ. Կազանում տեղի ունեցավ հերթական եռակողմ գագաթաժողովը, որի ժամանակ վերահաստատվեց Մադրիդի փաստաթուղթը և ընդունվեց նորը, որը Մադրիդի փաստաթղթի լրացված տարբերակն էր:[1]

Կազանյան փաստաթղթի ընդունումից ցայսօր որևէ փաստաթուղթ բանակցային սեղանին չի եղել: 2016թ. ապրիլյան քառօրյա բախուներից հետո Վիեննայում և Սանկտ-Պետերբուրգում կողմերը համաձայության են եկել զինադադարի ռեժիմի խախտման վերասկող մեխանիզմների տեղադրման շուրջ: Սակայն ինչպես նախկինում այս անգամ ևս պաշտոնական Բաքուն չի ցանկանում հարցի լուծումը տեսնել խաղաղ ճանապարհով և ամեն կերպ խոչընդոտում է այդ մեխանիզմների տեղադրմանը: Ավելին Բաքուն հասավ նրան, որ ԵԱՀԿ երևանյան գրասենյակը փակվելու գործընթաց սկսեց, որն իր գործունեությունը կդադարեցնի մյուս տարվա վերջին:

Սա ևս մի առհավատչյա, որ Բաքուն պատրաստ չէ փոխզիջումների և դեռ վաղ է խոսել խաղաղության և համակեցության մասին:

<u>ԵՐԿԱԿԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ:</u> Ինչպես տեսանք Թիմորի և Արցախի պարագայում մենք գործ ունենք ազգերի ինքնորաշման իրավունքի սկզբունքի կյանքի կոչման և երկակի մեկնաբանման հետ: Արևելյան Թիմորի պարագայում միջազգային հանրությունը, առաջնորդվելով համամարդկային արժեքներով և մարդու ազատ ապրելու իրավունքով, կազմակերպեց և իրականացրեց Թիմոր-Լեստե պետության անկախացման գործընթացը երկրում իրականացնելով ակնախության հանրաքվե: Արցախի պարագայում, այստեղի ժողովուրդն ինքը զգալով մոտալուտ աղետը կազմակերպեց և իրականացրեց սեփական անկախության հանրաքվեն, ընդ որում միջազգային դիտորդների ներկայությամբ, ովքեր այդ հանրաքվեն համարեցին ազատ և ժողովրդավարական: Եթե Թիմորի պարագայում մենք գործ ունենք միջազգային հանրության բարեհոգության, մարդասիրության և այլ վեհ մարդկային արժեքների հետ, որոնք վերջիվերջո հանգեցրեցին Թիմորի անկախացմանը, ապա Արցախի պարագայում ամբողջությամբ այլ պատկեր է: Ադրբեջանը բավական հարուստ նավթային պետություն է, որի նավթային պաշարներով հետաքրքրված են աշխարհի գերհզորները և ԽՍՀՄ փլուզումից հետո ադրբեջանական նավթի պաշարները մեծ պետությունների համար հետաքրքրությունների սպասարկման ռեսուրս հանդիսացան: Այս համատեքստում արցախյան հակամարտությունը ոչ ճիշտ ժամանակին և ոչ ճիշտ տեղում բռնկվեց: Սա հաշվի առնելով միջազգային հանրությունը, առաջնորդվելով սեփական շահով, այլ ոչ թե համամարդկային

[1] http://www.aniarc.am/2016/06/23/kazan-document-23-june/

արժեքներով, անտեսում է արցախի ժողովրդի ընդունած իրավարար վճիռը և շարունակում է Բաքվի հետ սիրախաղերի մեջ մտնել: Բաքուն օգտվելով առիթից շնորհիվ իր այսպես կոչված խավիարային դիվանագիտության կաշառում եվրոպական բարձրաստիճան պաշտոնյաներին, որպեսզի վերջիններս հակահայկական բանձևերին կողմ քվեարկեն: Վերջին այդպիսի բացահայտումներից էր ԵՄԽՎ նախագահ Պեդրո Ագրամունտին, ով բացահայտ կերպով վերցնելով ադրբեջանական կաշառքները մեծ հաճույքով հակահայկական անհիմն բանաձևեր է ընդունում ԵՄԽՎ-ում:

Այսօր օրհասական է Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը, քանի որ Արցախի ժողովուրդը արժանի է այսքան երկար ու արյունալի հակամարտությունից հետո ապրել ազատ և անկախ պետությունում: Միևնույն ժամանակ պարզից էլ պարզ է, Արցախը Ադրբեջանի կազմում անելու ոչինչ չունի և չնայած Բաքվի այն հայտարարություններին, որ Ադրբեջանը պատրաստ է Արցախին լայն ինքնավարութ-յուն տրամադրել իր կազմաում, Բաքուն էլ է հասկանում, որ Արցախը այլևս երբեք Ադրբեջան չի վերադառնա:

Արցախի ճանաչման գործընթացը, չնայած միջազգային հանրության կողմից երկակի ստանդարտների կիրառմանը, կամաց-կամաց, բայց առաջ է ընթանում: Արցախը տվյալ պահին ճանաչում են աշխարհի մի շարք երկրների մի քանի վարչական միավորներ, իսկ ինչպես այս տարվա սկզբին հայտարարեց ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդյանը միչև տարվա վերջ հնարավոր է, որ մի պետություն ճանաչի Արցախի անկախությունը:

Նարեկ Ղազարյան

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԻՄՈՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԵՐԿԱԿԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Բանալի բառեր՝ *Թիմոր, Արցախ, Ադրբեջան, երկակի ստանդարտներ*

Այս հոդվածի հիմնական նպատակն էր ուսումնասիրել միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկի՝ ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառելիությունը ժամանակակից միջազգային հարա-բերություններում և պարզել դրանց հանդեպ երկակի ստանդարտների կիրառման նախադեպերը: Տվյալ հոդվածում ուսումնասիրվել են Արևելյան Թիմորի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների նմանությունները և վերլուծության են ենթարկվել դրանց զարգացման գործընթացները: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության պարագայում միջազգային հանրությունը, առաջնորդվելով բացառապես սեփական շահերով, անտեսում է Արցախի ժողովրդի ազատ ապրելու իրավունքը:

Нарек Казарян

ПРИМЕНЕНИЕ ДВОЙНЫХ СТАНДАРТОВ И ПРОБЛЕМА МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ НЕЗАВИСИМОСТИ РЕСПУБЛИКИ АРЦАХ И ВОСТОЧНОГО ТИМОРА

Ключевые слова: *Тимор, Арцах, Азербайджан, Армения, двойные стандарты*

Основная цель этой статьи исследование одного из основных принципов международного права – применяемость в современных международных отношениях права на свободное волеизъявление и самоопределение народов и выявить прецеденты применения двойных стандартов в отношении них. В данной статье были исследованы сходства конфликтов в Нагорном Карабахе и Восточном Тиморе и анализированы процессы их развития. В результате данного исследования выясняется, что в случае Нагорно-Карабахского конфликта международное сообщество, преследуя исключительно свои интересы, игнорирует право народа Арцаха на независимость.

Narek Ghazaryan

THE ISSUES OF THE INTERNATIONAL RECOGNITION OF TIMOR-LESTE AND ARTSAKH, AND IMPLEMENTATION OF THE DOUBLE STANDARDS IN INTERNATIONAL RELATIONS

Key words: *Timor, Artsakh, Azerbaijan, Armenia, double standards*

The purpose of this article is to examine one of the fundamental principles of international law, self-determination of the peoples, and to find out the cases of implementation of double standards regarding this principle. In this article, the conflicts of the East Timor and Nagorno Karabakh have been examined, and the main similarities have been researched, and the development process has been analyzed. As a result, we can state that in the case of the Nagorno Karabakh conflict the international community, by following its own interests, does not want to recognize the right of the people of Artsakh for self-determination.